բերեալ իքմինն Նորին Ժ. Թուման փող, մէկ Թուման էլ ինքն խարջի էր արել, որ իւրն բաշխեցաք վերայ աշխատանք ունէր, եւայլ. Բ Թօփ դանաւաթ. մէկն կտրած շալիքայու, և մէկն սադ, և մէկ Թփանկ, որ յղեցի Հրամանոցդ, և Ժ. Թուման փողն առեալ ի Նմանէ խարջի արարի, Թողութիւն շնորհես սխալանաց իմոց, զի ոչ էր պարտ մեզ առնուլ զայն, զոր նախ ունէի ի մտի, զամենն յղել Հրամանոցդ, բայց յոյժ անճար էի, արդ ակէր իմ, եթէ Տէր կամեսցի Հրամանոցդ մաքուր աղօթիւքն կենդանի լինիմք, փոխարէնն կրկնապատիկ կու ծառայեմք Հրրամանոցդ, զի յոյս ունիմք առ աստուած որ զմեզ խաչալաթից նեղբոյ չթողլի, այլ զի Հրամանոցդ լայեղէնն իքմին չկարացինք յղել, բայց, Գ. կազ բէկուստ, Բ. գլուխ շաքար, ԾԲ խաղիլ, Նարաթ. ԺԲ. ֆռանկի չախու, ուղարկեցի Հրամանոցդ ամենայն կողմանց Թողութիւն շնորհես, զի վերջապէս քոյդ եմք համդերձ, վիճակով իմով Նաեւ այս գրոյս Թարիղումն Հրրամանոցդ սուրբ աղօթիւքն գուրս եկանք յերկիր, և լեցի պետական գլուխդ ձեր ողջ կրկին կենօք, ի պարծանս Նուաստիս Ամէն: Եղեւ օգոստոս ամսոյս 13. Շամախի ծառայ Սահակ յարեգայէ ընկալ ՌՄԶ (147) (175) տարի յառաջ:

Այն համբուրեմ սրբազան Վեհին շատ և շատ շնորհակալ եմ Սրբազանից որ սրբազան և ծառայ Նուիրակի փողն որ մեր Սահակ վարդապետին շաֆաղաթ եր արարել մեամ ծառայ Յովանէս դի Զարէ 1753 (140 տարի յառաջ):

Զանպիտան ծառայս քո, համբուրելով զաւբր զարշապարն քո փափկալի սրտիւ խնդրեմ ի տեառնէդ մի մոռանայցես զանարժանս և զօրհնալիր նամակ Հրամանոցդ մի՛ ապառեսցես

Ծառայակցին քում անպիտան Թումանէ դի Մկրտիչ":¹)

147 տարի յառաջ Շամախւոյ առաջնորդ Սահակ եպիսկոպոսի գիրն է առ Իսրայէլ կաթուղիկոսն Աղուանից:

Իբրեւ նշմար հնութեան դնեմ այս տեղ Շամախու առաջնորդ Մինաս արքեպիսկոպոսի 1828 թուին տուած Բաղուեցի

¹) Այս գրութեանց բնականներն ինձ մօտ են: